



ԵՅԳԾ Տեղեկագիր

Երիտասարդության և համայնքների գործողությունների
ծրագրի եռամսյակային հրատարակություն



№ 4 (5)

2008թ. հոկտեմբեր-դեկտեմբեր



USAID
FROM THE AMERICAN PEOPLE

ԵՅԳԾ-ն ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորված հնգամյա ծրագիր է, որը սկսվել է 2004թ. հոկտեմբերին: Ծրագիրը գործում է Դաշնային Պաշտպանության 80 համայնքներում և նպատակ ունի խթանելու քաղաքացիների մասնակցությունը հանրային հարցերի լուծման գործում: Ծրագրի շրջանակներում համայնքներին տրամադրվում է կազմակերպչական աջակցություն Երիտասարդական գործունեության ակումբներ (ԵԳԱ) և Համայնքների գործունեության հանձնաժողովներ (ՀԳՀ) հիմնադրելու համար: ԵՅԳԾ-ն ֆինանսավորում չի տրամադրում համայնքների կողմից նախաձեռնվող և իրականացվող ծրագրերի համար: Սույն տեղեկագրում նկարագրված նախաձեռնությունները կազմակերպվել են համայնքների կողմից և ֆինանսավորվել են տեղական տարբեր հովանավորների կամ դոնոր կազմակերպությունների կողմից:

Վերապահում. Սույն տեղեկագրի տպագրումը հնարավոր է դարձել ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցության շնորհիվ՝ Կրթության զարգացման ակադեմիայի կողմից իրականացվող Երիտասարդության և համայնքների գործողությունների ծրագրի շրջանակներում: Սույն տեղեկագրի մեջ արտահայտված տեսակետները և կարծիքները պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ կառավարության կամ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության տեսակետները:

ԵՅԳԾ ակտիվ խմբերը գործում են՝ բարձրացնելու համայնքների բնակիչների իրազեկությունը և խթանելու նրանց մասնակցությունը ՏԻՄ ընտրություններին

Հոկտեմբերին՝ տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) ընտրություններից առաջ, ԵՅԳԾ քաղաքացիական խմբերը ակտիվորեն ներգրավված էին ընտրություններին իրենց համայնքների բնակիչների մասնակցության խթանման, ինչպես նաև ընտրական ընթացակարգերի և համայնքների ղեկավարների թեկնածուների ծրագրերի վերաբերյալ համայնքի բնակիչների իրազեկվածության բարձրացմանն ուղղված աշխատանքներում: Այդպիսի նախաձեռնությունների օրինակներ են.

- ◆ Ուրցածորի ՀԳՀ-ն (Արարատի մարզ) կազմակերպել էր համայնքային ժողով գյուղապետի պաշտոնի համար առաջադրված երեք թեկնածուների և համայնքի բնակիչների հետ: Ժողովին, որը տեղի ունեցավ համայնքի դպրոցի դահլիճում, մասնակցում էր մոտ 200 մարդ: Երեք թեկնածուներից յուրաքանչյուրը ներկայացրեց իր ծրագիրը, նախատեսած աշխատանքները և համայնքի զարգացման իր տեսլականը: Թեկնածուների ելույթներից հետո համայնքի բնակիչները հնարավորություն ունեցան նրանց ուղղել իրենց հուզող հարցերը և ստանալ պատասխաններ: Այնուհետև, ձայնը տրվեց թեկնածուների վստահված անձանց և աջակիցներին, որոնք հերթով ներկայացրեցին իրենց սատարած թեկնածուի ծրագիր

առավելությունները: Հանդիպման ընթացքում քննարկվեցին նաև համայնքի մի շարք կարևոր խնդիրներ և դրանց լուծման ճանապարհները: Համայնքի բնակիչների գնահատմամբ հանդիպումը շատ օգտակար էր, քանի որ այն թույլ տվեց նրանց ավելի լավ ծանոթանալ թեկնածուների ծրագրերին, նրանց դիրքորոշումներին և ներուժին, և հնարավորություն տվեց կողմնորոշվելու և գիտակցված ընտրություն կատարելու:

- ◆ Քաղաքացիական և սահմանադրական իրավունքների վերաբերյալ Համայնքի բնակիչների իրազեկության բարձրացմանն ուղղված ակցիայի շրջանակներում Սառնաղբյուրի ԵԳԱ-ն (Շիրակի մարզ) համայնքի երիտասարդների համար կազմակերպել էր սե-

մինար՝ «Ազատ և արդար ընտրություններ» թեմայով: Սեմինարի ընթացքում մասնակիցներին ներկայացվեց ընտրությունների վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը, ընտրական ընթացակարգերը, ընտրական հանձնաժողովի, վստահված անձանց և դիտորդների դերը և ընտրություններին առնչվող այլ հարցեր: Սեմինարի մասնակիցների թվում էին նաև առաջին անգամ ընտրել պատրաստվող երիտասարդներ, որոնք ցանկություն հայտնեցին ՏԻՄ ընտրությունների ժամանակ հանդես գալ որպես դիտորդներ և կիրառել ստացված գիտելիքները՝ իրենց ներդրումն ունենալու համայնքում ազատ և արդար ընտրությունների անցկացման գործում: (Հարունակությունը՝ էջ 2)



Համայնքային ժողով գյուղապետի պաշտոնի թեկնածուների հետ՝ նախաձեռնած Ուրցածորի ՀԳՀ-ի (Արարատի մարզ) կողմից

Սեմինար Մարդու իրավունքների վերաբերյալ Դավթաշենում



«Մարդու իրավունքներ» թեմայով սեմինար՝ կազմակերպված Դավթաշենի ԵԳԱ-ի (Արագածոտնի մարզ) կողմից

Նոյեմբերին Դավթաշենի ԵԳԱ-ն (Արագածոտնի մարզ) նախաձեռնեց և իրականացրեց «Մարդու իրավունքներ» թեմայով սեմինար: Սեմինարը վարելու համար ԵԳԱ անդամները իրավիճակ էին իրավաբան Խանում Սկրտչյանին, ով մեծ սիրով ընդունեց հրավերը և անցկացրեց սեմինարը Դավթաշենի երիտասարդների համար: Սեմինարի ընթացքում մասնակիցները քննարկեցին մարդու իրավունքների և դրանց խախտումների հետ կապված բազմաթիվ հարցեր, քննարկեցին նաև առօրյա կյանքում իրավունքների խախտման տարբեր դեպքեր՝ դպրոցում, մասնավոր և պետա-

կան սեկտորների ներկայացուցիչների հետ հարաբերություններում, երեխաների իրավունքների և քաղաքացիների սահմանադրական իրավունքների և այլ իրավախախտումների դեպքեր: Մասնակիցները նաև տեղեկացան, թե որ իրավունքների խախտման դեպքում ուր և ինչպես կարելի է դիմել: Բարձր գնահատելով սեմինարի ընթացքում ստացված գիտելիքները՝ ԵԳԱ անդամներն առաջարկեցին նմանատիպ հանդիպումներ կազմակերպել նաև համայնքի այլ բնակիչների համար՝ համայնքում իրավունքների վերաբերյալ իրազեկության բարձրացումը շարունակելու նպատակով:

Այս համարում նաև

- Քաղաքացիական ակտիվություն Արարատի մարզում. ԵՅԳԾ ակտիվ խմբերը հասցեագրում են համայնքի խնդիրները 2
- ԵՅԳԾ Համայնքային խմբերի քաղաքացիական ակտիվության ուսումնական այց Ուկրաինա 3
- Բարձրունու ՀԳՀ-ն պաշտպանում է համայնքի իրավունքները 3
- Մարցի ՀԳՀ-ն փորձում է 3 ակտիվացնել մշակութային կյանքը համայնքում
- Ախթալայի ՀԳՀ-ն խթանում է 3 բնակիչների համագործակցությունը ՏԻՄ-ի հետ
- Լուկաշինի ՀԳՀ-ն համագործակցում է «Դեմոկրատիկ ծրագրի հետ»՝ աջակցելու համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին 4
- Վարդենիկի ՀԳՀ-ն բարձրացնում է բնակիչների իրազեկությունը համայնքի զարգացման ծրագրի վերաբերյալ 4
- Պտղնիի ԵԳԱ-ն աջակցում է 4 Սեւաբերդ համայնքին

ԵՅԳԾ-ում ընդգրկված համայնքներ

- Ներկայումս հանրապետության տարածքում գործում է Երիտասարդական գործունեության 37 ակումբ և Համայնքի գործունեության 43 հանձնաժողով
- Ամենափոքր համայնքը Չոլվաշենն է, որն ունի 206 բնակիչ, իսկ ամենամեծը՝ Դիլիջանը՝ 16,202 բնակիչ
- Անցած չորս տարիների ընթացքում ծրագրին մասնակցել է ավելի քան 2,000 կամավոր և իրականացվել է ավելի քան 1,200 քաղաքացիական նախաձեռնություն

*2001թ. մարդահամար, <http://www.armsat.am>

(ակզբը՝ էջ 1)

Սեմինարից հետո ԵԳԱ անդամները դիմեցին գյուղապետարան եւ թույլտվություն ստացան, որպեսզի առաջին անգամ ընտրող չորս երիտասարդներ ՏԻՄ ընտրություններին մասնակցեն որպես դիտորդներ: ԵԳԱ անդամների կարծիքով երիտասարդները կարողացան լավ կատարել դիտորդի պարտականությունները եւ նպաստել գյուղում արդար ընտրությունների անցկացման գործընթացին:

◆ Կոթի ԶԳԶ-Գ (Տավուշի մարզ) կազմակերպել էր համայնքի բնակիչների հանդիպումը ավագանու անդամներին 11 թեկնածուների հետ: Հանդիպման ընթացքում թեկնածուները ներկայացրեցին համայնքի զարգացմանն ուղղված իրենց ծրագրերը, պատասխանեցին համայնքի բնակիչների հարցերին եւ հարցազրույց տվեցին «Երիտասարդ Կոթի» թերթի համար: Համայնքի բնա-

կիչների կարծիքով ավագանու անդամների թեկնածուների հետ հանդիպումը եւ նրանց ծրագրերի վերաբերյալ ստացված ինֆորմացիան շատ կարեւոր էր եւ օգտակար՝ որոշելու համար, թե ում են նրանք ուզում տալ իրենց ծայրը եւ տեսնել համայնքի ավագանու կազմում: Ընտրություններից հետո ԶԳԶ անդամները ԶԳԶ գործունեության կենտրոնում կազմակերպեցին հանդիպում ավագանու արդեն ընտրված 7 անդամների հետ, շնորհավորեցին նրանց ընտրվելու կապակցությամբ եւ ավելի մանրամասն քննարկեցին նրանց ծրագրերը եւ համայնքի խնդիրների լուծման գործում ԶԳԶ-ի ներգրավման եւ ավագանու հետ համագործակցության հնարավորությունները: ԶԳԶ-ի նախաձեռնությունը շատ լավ ընդունվեց ավագանու կողմից, եւ, տեսնելով ԶԳԶ անդամների ակտիվությունը, նրանք համոզ-

վեցին, որ ԶԳԶ-ն կարող է հանդիսանալ կամուրջ իրենց եւ համայնքի բնակիչների միջեւ եւ խթանի համայնքի ներգրավվածությունը հանրային խնդիրների լուծման եւ որոշումների ընդունման գործընթացներում:

◆ Վերին Խոտանանի ԶԳԶ-Գ (Սյունիքի մարզ) կազմակերպել էր կլոր-սեղան քննարկում «Կինը՝ բաղաձայնությունը» թեմայով՝ համայնքի կանանց մասնակցությունը ՏԻՄ ընտրություններին, ինչպես նաեւ նախընտրական գործընթացներին, ավագանու անդամների եւ գյուղապետի պաշտոնի թեկնածուների հետ հանդիպումներին եւ բանավեճերին խթանելու նպատակով: Հանդիպման ընթացքում մասնակիցները ներկայացրեցին եւ քննարկեցին այն խոչընդոտները, որոնց պատճառով իրենք չեն կարողանում մասնակցել քաղաքական գործընթացներին: Քննարկման արդյունքում կանայք եկան այն

եզրահանգման, որ նշված խոչընդոտների մեծ մասը արհեստական են եւ կարող են հեշտությամբ հաղթահարվել իրենց կողմից վճարակառուցված ընտրություններին մասնակցելու ցանկություն ցուցաբերելու դեպքում: Հանդիպման ընթացքում մասնակիցները քննարկեցին նաեւ գեներային հավասարության առնչվող մի շարք հարցեր: Բազմիցս շեշտվեց քաղաքականության մեջ կանանց մասնակցության կարեւորությունը: ԶԳԶ անդամները համոզված են, որ հանդիպման արդյունքում կաճի կանանց ակտիվությունը, եւ նրանք ավելի լավ կգիտակցեն իրենց եւ իրենց երեխաների կյանքի որակի վրա ազդեցություն ունեցող որոշումների ընդունման գործընթացում իրենց մասնակցության անհրաժեշտությունը: ԶԳԶ անդամները հուսով են, որ իրենց նախաձեռնությունը կխթանի կանանց մասնակցությունը ՏԻՄ ընտրություններին եւ քաղաքական գործընթացներին:

Քաղաքացիական ակտիվություն Արարատի մարզում. ԵՅԳԾ ակտիվ խմբերը հասցեագրում են համայնքի խնդիրները

Նոյեմբերին Այգեպատի ԵԳԱ-ն կազմակերպել էր իրականացրել էր ակցիա՝ համայնքում աղբա-նետման դեմ: Այգեպատի ակցիան նպատակ ուներ բարձրացնելու համայնքի բնակիչների իրազեկությունը աղբա-նետման եւ հատկապես՝ պոլիէթիլենի տոպրակների ու պլաստիկ շշերի նետման հետեւանքով էկոլոգիային հասցվող վնասի վերաբերյալ: Այգեպատի շրջանակներում ԵԳԱ անդամները կազմակերպեցին սեմինար՝ շրջակա միջավայրը պլաստիկ տոպրակներով եւ շշերով աղտոտելու վնասների վերաբերյալ: Այնուհետեւ, նրանք պատրաստեցին պատարներ՝ «Ոչ աղբա-նետմանը եւ շրջակա միջավայրի աղտոտմանը» կոչերով, եւ պլաստիկ շշերից պատրաստեցին խրտվիլակ պոլիէթիլենի տոպրակներից գլխով՝ գրավելու համայնքի բնակիչների ուշադրությունը եւ ներկայացրեցին համայնքում աղբ նետող մարդու կերպարը: ԵԳԱ անդամները՝ զինված պաստառներով, շրջեցին ողջ գյուղի տարածքով՝ «Ոչ աղբա-նետմանը» եւ «Ոչ պլաստիկ շշերին» կոչերի միջոցով փորձելով սթափեցնել համայնքի բնակիչներին, նրանց ավելի պատասխանատու դարձնել իրենց գործողությունների համար՝ կոչ անելով բոլորին դադարել աղբ նետելը համայնքում դրա համար չնախատեսված վայրերում: Համայնքի բնակիչները՝ լսելով դրսից եկող անսովոր աղմուկը եւ կոչերը, դուրս ելին գալիս իրենց տներից եւ շատ զարմանում հատկապես, երբ տեսնում էին իրենց իսկ երեխաներին ակցիայի մասնակիցների շարքերում: ԵԳԱ անդամները համոզված են, որ ակցիայի միջոցով նրանց կարողացան գրավել համայնքի բնակիչների ուշադրությունը եւ բարձրացնել նրանց իրազեկությունը շրջակա միջավայրի պահ-

պանման կարեւորության վերաբերյալ ու հուսով են, որ ակցիայի արդյունքում համայնքի բնակիչները կդադարեն աղբ նետել համայնքում: Համարելով ԶԳԶ գործունեության կենտրոնում ինտերնետ կայքի ապահովումը առաջնաերթ խնդիր, նոյեմբերին, Ուրցածորի ԶԳԶ-ն դիմեց գյուղապետարան՝ խնդրելով ԶԳԶ-ին տրամադրել թվային հեռախոսագիծ, որի միջոցով հնարավոր կլիներ ԶԳԶ կենտրոնում միացնել ինտերնետ: Հարցի քննարկումից հետո գյուղապետը համաձայնեց ԶԳԶ-ին տրամադրել թվային կայանի հեռախոսագիծ ինտերնետ կապը ԶԳԶ կենտրոնում ապահովելու նպատակով, եւ խոստացավ վճարել ինտերնետ կայքի ամսական վարձի գումարի կեսը: ԶԳԶ անդամները ստանձնեցին մյուս կեսի վճարումը: Նոյեմբերի 7-ից ԶԳԶ գործունեության կենտրոնում կա ինտերնետ կապ, որը նոր հնարավորություններ է բացում ԶԳԶ անդամների առջեւ՝ թույլ տալով նրանց ստանալ համայնքային զարգացման ոլորտին վերաբերող թարմ տեղեկատվություն, հաստատել համա-գործակցություն տեղական եւ միջազգային կազմակերպությունների հետ եւ ստանալ տեղեկատվություն եւ նորություններ նաեւ այլընտրանքային աղբյուրներից: ԶԳԶ անդամներն այժմ կարող են նաեւ այցելել պետական եւ այլ կազմակերպությունների կայքերը եւ ստանալ թարմ տեղեկություններ օրենքների եւ օրենսդրական դաշտում կատարված փոփոխությունների վերաբերյալ: Ինտերնետ կայքի ապահովումից հետո հանձնաժողովի անդամները ԶԳԶ կենտրոնում հիմնեցին ինտերնետ ակումբ, որտեղ նրանք որոշել են համայնքի բնակիչներին կանա-



Աղբա-նետման դեմ ակցիա՝ կազմակերպված Այգեպատի ԵԳԱ-ի կողմից

վոր հիմունքներով սովորեցնել ինտերնետից օգտվել: Ներկայումս ակումբն ունի 10 անդամ: ԶԳԶ-ն նաեւ որոշել է ստեղծել Ուրցածոր համայնքի ինտերնետային կայքը: Այս ուղղությամբ աշխատանքներն արդեն սկսվել են: ԶԳԶ անդամների կողմից համայնքի ղեկավարների հետ անցկացված բանակցությունների արդյունքում վերջիններս՝ գիտնելով ԶԳԶ կենտրոնում ինտերնետ կայքի ունենալու կարեւորությունը, համաձայնեցին համայնքի 2009թ բյուջեում հատկապես գծով առանձնացնել ինտերնետ կայքի եւ համայնքի կայքի համար դոմեյնի ձեռքբերման եւ դրա սպասարկման գումարը: Անցյալ վեց ամիսների ընթացքում Ռանչպարի ԶԳԶ-ն փորձում էր լուծել աղբահանության խնդիրը: Այս հարցի լուծման տարբերակներ քննարկելու նպատակով ԶԳԶ-ն հունիսին հանդիպում էր կազմակերպել գյուղապետի, գյուղապետարանի այլ ներկայացուցիչների եւ համայնքի բնակիչների հետ: Հանդիպման ընթացքում ԶԳԶ անդամները ներկայացրեցին իրենց առաջիկա ծրագրերը: քննարկվեցին համայնքի առաջնաերթություն-

ները, որոնց թվում էին աղբահանությունը եւ փողոցների գիշերային լուսավորումը: ԶԳԶ-ն համայնքի ղեկավարներին առաջարկեց համայնքի բյուջեից գումար հատկացնել աղբահանության կազմակերպման համար: Խնդիրը իրատեսա էր, քանի որ կուտակված աղբը առաջացնում էր լուրջ բնապահպանական խնդիրներ եւ սպառնում էր համայնքի բնակիչների առողջությանը: Բանակցությունների արդյունքում գյուղապետը խոստացավ կազմակերպել աղբահանության գործընթացը՝ տրամադրելով աղբա-տար մեքենա եւ վարձելով հատուկ աշխատող: ԶԳԶ անդամները հարցում անցկացրեցին համայնքի բնակիչների շրջանում, որի արդյունքների հիման վրա եւ կազմեցին աղբահանության ամենաօպտիմալ ժամանակացույցը: ԶԳԶ-ն համաձայնեցրեց ժամանակացույցը գյուղապետարանի հետ, այնուհետեւ տպեց եւ փակցրեց դրա օրինակները գյուղի բոլոր փողոցներում: ԶԳԶ-ի նախաձեռնության եւ հետեւողական ջանքերի շնորհիվ նոյեմբերից Ռանչպար գյուղում կանոնավոր կերպով իրականացվում է աղբահանությունը:

Կրթությանը զարգացման ակադեմիա
 Այգեժոր 10,
 0019 Երևան
 Հայաստանի Հանրապետություն
 Հեռ.՝ (374 10) 225 636
 Ֆաքս՝ (374 10) 275 686
 Էլ փոստ՝ ycap@aed.am

Երիտասարդության եւ համայնքների գործողությունների ծրագիր



Academy for Educational Development

Մեր ուսուցիչներն են՝
<http://ycap.am>
<http://aed.am>

Լուկաշինի ՀԳՀ-ն համագործակցում է «Հեյֆեր» ծրագրի հետ՝ աջակցելու համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին

Լուկաշինի ՀԳՀ-ի (Արմավիրի մարզ) գործունեության ռազմավարական ուղղություններից մեկն է համայնքում աղքատության նվազեցումը եւ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցության ցուցաբերումը: Այս նպատակով ՀԳՀ անդամները հաճախակի հանդիպումներ են ունենում տեղական եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, փորձում են կապեր եւ համագործակցություն հաստատել նրանց հետ, անընդհատ դիմում են մասնակցում են տարբեր ծրագրերի: Երբեք չեն մոռացել Լուկաշինի ՀԳՀ-ն տեղեկացավ, որ «Հեյֆեր» ծրագրին

մասնակցության իրենց հայտը ընդունվել է: «Հեյֆեր» ծրագրի շրջանակներում համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվում է մեկական կով: ՀԳՀ անդամները կազմեցին հանձնաժողով, որը գյուղապետարանի հետ համատեղ պատրաստեց համայնքի անապահով ընտանիքների ցուցակը եւ ներկայացրեց այն «Հեյֆերին»: Ցուցակում ընդգրկված 25 ընտանիքներից յուրաքանչյուրը ստացավ մեկական կով: Համաձայն «Հեյֆերի» կանոնակարգի, երեք տարի հետո կովերից ծնված երիւնջները պետք է փոխանցվեն համայնքի անապահով այլ ընտանիքներին:



Լուկաշինի ՀԳՀ-ի նախաձեռնությունը. աջակցություն համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին

ԵՀԳԾ-ն ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորված հնգամյա ծրագիր է, որը իրականացվում է Կրթությանը զարգացման ակադեմիայի (ԿԶԱ) կողմից: ԵՀԳԾ հիմնական նպատակն է ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր համայնքում սերմանել անհատի կամ անձանց խմբի՝ որպես հանրային շահերի պաշտպան ծառայելու գաղափարը եւ դրա կարևորությունը:

Ծրագրի երեք հիմնական բաղադրիչներն են.

1. Ստեղծել մեխանիզմներ, որոնց միջոցով կիսբանվի երիտասարդների եւ համայնքների այլ անդամների մասնակցությունն իրենց համայնքներում հանրային հարցերի լուծման գործընթացին՝ աջակցելով համայնքներում երիտասարդության, համայնքային եւ հանրային խնդիրների լուծմանը զբաղվող երիտասարդական գործունեության ակունքների (ԵԳԱ) եւ Համայնքների գործունեության հանձնաժողովների (ՀԳՀ) հիմնադրմանը:
2. Ավելացնել երիտասարդների եւ համայնքների այլ անդամների՝ քաղաքացիական ակտիվության բարձրացման եւ հանրային հարցերի լուծման գործընթացում ավելի ակտիվ մասնակցելու համար անհրաժեշտ գիտելիքները/հմտությունները՝ երիտասարդներին եւ համայնքի այլ անդամներին տրամադրելով հնարավորություններ, որոնք կօգնեն բարձրացնել նրանց իրազեկությունը, հարստացնել գիտելիքները եւ զարգացնել հմտություններ, որոնք անհրաժեշտ են երիտասարդությանը, համայնքի այլ անդամներին եւ հանրությանը հուզող խնդիրները հաջողությամբ լուծելու համար:
3. ԵԳԱ/ՀԳՀ-ներն իրականացնեն ծրագրեր, որոնք կբարձրացնեն քաղաքացիական ակտիվությունը եւ մասնակցությունը, կբխեն հանրության եւ համայնքի շահերից, կնպաստեն համայնքներում հանրային հարցերի լուծման գործում սիստեմատիկ բարեփոխումների իրականացմանը եւ կիսբանվեն համայնքի կարիքների լուծման համար ավելի կայուն մոտեցումների որդեգրումը:

Վարդենիկի ՀԳՀ-ն բարձրացնում է բնակիչների իրազեկությունը համայնքի զարգացման ծրագրի վերաբերյալ

Դեկտեմբերին Վարդենիկի ՀԳՀ անդամները (Գեղարքունիքի մարզ)՝ տեղեկանալով, որ նոր ընտրված ավագանին արդեն հաստատել է համայնքի զարգացման քառամյա ծրագիրը, դիմեցին համայնքի ղեկավարին եւ խնդրեցին իրենց տրամադրել հաստատված ծրագրի պատճեն: ՀԳՀ անդամները՝ ստանալով համայնքի քառամյա զարգացման ծրագրի պատճեն, համառոտագրեցին այն եւ մատչելի ձևով ներկայացրեցին համայնքում նախատեսվող աշխատանքները եւ ծրագրերը: Այնուհետեւ, վերոհիշյալ նյութով տպագրեցին թերթիկներ, բազմացրեցին դրանք եւ փակցրեցին համայնքի մարդաշատ վայրերում, այնպես որ համայնքի բոլոր բնակիչներին հասանելի լինի այդ ինֆորմացիան եւ նրանք տեղե-

կանան, թե երբ եւ ինչ խնդիրներ է նախատեսված լուծել համայնքում: ՀԳՀ անդամների կողմից համայնքում տարածվեց համառոտագրի մոտ 100 օրինակ: ՀԳՀ-ի նախաձեռնությունը շատ բարձր գնահատվեց համայնքի բնակիչների կողմից, որոնք այժմ տեղյակ են, որ, օրինակ՝ 2009թ-ին գյուղում նախատեսվում է կառուցել մանկապարտեզ, իսկ 2010թ-ին՝ լուծել խմելու ջրի խնդիրը: ՀԳՀ անդամները վստահ են, որ իրենց նախաձեռնությունը կնպաստի համայնքի ղեկավարների պատասխանատվության բարձրացմանը՝ իրենց կողմից հաստատված ծրագրի իրականացման համար, ինչպես նաեւ կնպաստի տեղական իշխանությունների հաշվետվողականության եւ գործունեության բախանցիկության բարձրացմանը:

Պողնիի ԵԳԱ-ն աջակցում է Սեւաբերդ համայնքին

Հոկտեմբերին Պողնիի ԵԳԱ-ն (Կոտայքի մարզ) նախաձեռնել էր մարզի ամենախոցելի համայնքներից մեկի՝ Սեւաբերդի բնակիչների համար հագուստի եւ գրենական պիտույքների հավաքագրման ակցիա: Կլիմայական անբարենպաստ պայմանների պատճառով Սեւաբերդ համայնքի բնակիչները չեն կարողանում զբաղվել գյուղատնտեսությամբ: Այդ եւ աշխատատեղերի բացակայության, ինչպես նաեւ մարդկատնտեսության հիմնական մայրուղուց հեռու գտնվելու հետևանքներով Սեւաբերդից բնակչության արտագաղթի տոկոսն ամենաբարձրներից մեկն է Հայաստանում:

ԵԳԱ-ի նախաձեռնությունը դրական արձագանք ստացավ համայնքի բնակիչների կողմից. բոլորն էլ տեղյակ էին Սեւաբերդ համայնքի բնակիչների սոցիալական ծանր պայմանների մասին եւ մեծ պատրաստակամությամբ մասնակցեցին ակցիային՝ նվիրաբերելով հագուստ եւ գրենական պիտույքներ: Ակցիայի ավարտին ԵԳԱ անդամները զանգահարեցին Սեւաբերդի անդամները զանգահարեցին Սեւաբերդից իրենց նախաձեռնած ակցիայի մասին եւ խնդրեցին օգնել արկղների տեղափոխման եւ օգնության բաշխման հարցում: Հոկտեմբերի 25-ին Պողնիի ԵԳԱ անդամներ Հերմինե Պողոսյանը եւ Տաթև Մնացականյանը հագուստով եւ գրենական պիտույքներով լի արկղները տեղափոխեցին Սեւաբերդ, որտեղ գյուղապետի տեղակալի հետ միասին կազմակերպեցին օգնության բաշխումը համայնքի բնակիչներին: Վերջիններս շատ զգացված եւ շնորհակալ էին Պողնի համայնքի բնակիչներին իրենց եւ իրենց խնդիրների նկատմամբ ցուցաբերած ուշադրության համար: